

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԽՈՐՀՐԴԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Վեմ»-ի ներկայ համարից սկսում ենք հրատարակել Հայաստանի հոբիրդի արձանագրութիւնները: Հետագային կը տանք եւ Հայաստանի Պարլամենտի արձանագրութիւնները: Դժբախտաբար, մեր ձեռքի տակ չկան ոչ հոբիրդի եւ ոչ էլ Պարլամենտի պաշտօնական արձանագրութիւնները: Մենք չգիտեմք նոյն իսկ, թէ նրանք, առ հասարակ, գոյութիւն ունի՞ն, թէ ոչնչացւած են բոլշեւիկների ձեռքով, խոբիրդային տիրապետութեան առաջին տարիներին: Մեզ յայտնի է, օրինակ, որ 1920-21 թւի ձմեռը Երեւանի կառավարական եւ քաղաքային հիմնարկութիւնների մէջ դիւանական քղքերով վառարան էին վառում: Յայտնի է նոյնպէս, որ 1921 թ. ամառը Երեւանից վագոններով Հայաստանի դիւաններից քղքեր էին արտահանում Թաւրիզ՝ ծախելու համար իբրեւ ապրանք փաթեթելու թուղք: Անհաւանական չէ, որ Հայաստանի գերագոյն օրէնդրական մարմնի դիւաններն էլ ենթարկւած լինեն նման ճակատագրի:

Ինչ որ մեր ձեռքը կայ այսօր, Երեւանի ու Թիֆլիսի քերքերում հրատարակւած արձանագրութիւններն ու քղքակցութիւններն են եւ պատահաբար մնացած վաւերագրեր: Մեծ դժարութեամբ մեզ յաջողւել է հաւաքել այդ նիւթերը եւ դրանց հիման վրա վերականգնել հոբիրդի եւ Պարլամենտի արձանագրութիւնները: Դժբախտաբար, այս նիւթերն էլ լրիւ չեն. մի շարք նիւտերի արձանագրութիւններ առհասարակ հրատարակւած չեն. մի քանի հրատարակւած արձանագրութիւններ մեզ չյաջողեց գտնել. մի շարք արձանագրութիւններ էլ հրատարակւած են շատ կրճատ ձեւով: Որով, ուրեմն, մեր տւած նիւթը կատարեալ չէ ոչ քանակով, ոչ էլ որակի տեսակէտից: Այնուամենայնիւ, ինչ որ մեր տարագրային պայմաններում կարելի է եղել հաւաքել՝ իրապէս անգին գանձ է Հայաստանի անկախութեան շրջանը պատկերացնելու համար:

Հրատարակւած արձանագրութիւնների մեծագոյն մասը առնւած է Երեւանի «Յառաջ» ու «Հայաստանի Աշխատաւոր» եւ Թիֆլիսի «Հորիզոն», «Աշխատաւոր» եւ ռուսերէն «Կապկազկոյէ Սոլովօ» քերքերից: Այս քերքերում տպւած արձանագրութիւնները կազմւել են հոբիրդի եւ Պարլամենտի պաշտօնական արձանագրողների

ձեռնով: Թիֆլիսի քերթերում տպւած մի մասը հաղորդւած է Հայաստանի Հեռագրական Գործակալութեան կողմից: Երեսնի «Յառաջ» քերթում տպւած արձանագրութիւնները ժամանակին անցել են քերթի խմբագրի (այժմայ «Վէմ»-ի խմբագրի) ձեռքով: Որոշ լրացումներ եւ մասնակի ուղղումներ արել ենք նաեւ Երեսնում հրատարակուող «Ժողովուրդ» (Հայ Ժող. Կուս.), «Հայաստանի Ձայն» (Ռամկ.) եւ «Սոցիալիստ Յեղափոխական» (Սոց. - յեղ.) քերթերի պատահական համարներից:

Իւրաքանչիւր արձանագրութեան տակ նշանակւած է աղբիւրը, որով ցանկացողը կարող է ստուգում կատարել: ԽՍԲ.



ՆԻՍՏ Ա.

1 Օգոստոս, Հինգշաբթի, Ժամը 11.30

1918 թ. օգոստոս մէկին (նոր տոմարով), հինգշաբթի օր, Երեսնում, բացեց Հայաստանի Հանրապետութեան անդրանիկ դերադոյն օրէնսդրական ժողովի՝ Հայաստանի խորհրդի առաջին նըստաշրջանը:

Քաղաքն ունէր սովորական տեսք: Ո՛չ մի զարդարանք փողոցներում: Բացի մի քանի պաշտօնական շէնքերից՝ ո՛չ մի դրօշակ: Խանութները բաց էին: Կառավարութիւնը որեւէ միջոց ձեռք չէր առել եւ թողել էր, որ ազդարնակութիւնն ինքը սրտէ իր վերաբերումը, եւ ամէն ոք ըստ սովորութեան՝ իր դործի յետեւից էր: Միայն խորհրդի առաջ եւ շուրջը տիրում էր արտակարգ եւ ու դեռ: Ժողովուրդը խոնկել էր այդու եւ մայիսի վրա: Զօրքը, հետեւակ, այրուծի, թնդանօթածիկ ու դնդաջիր, երաժշտութեամբ ու դրօշակներով հաւաքւում եւ բռնում է քաղաքային այգին չրջապատող փողոցները: Խորհրդի համար յատկացւած էր քաղաքի կենտրոնական այգու դիմաց գտնուող, թեմական դպրոցին պատկանող շէնքը, ուր տեղաւորւած էր քաղաքային ակումբը: Ակումբի թատերասրահը վերածւած էր խորհրդի ընդհանուր ժողովասրահի, իսկ կողքի սենեակները՝ նախագահութեան, ֆրակցիաների, դիւանատան եւայլն:

Բեմի վրայ շինւած էր նախագահութեան օթեակը՝ աջ կողմը ունենալով մի սեղան թարգմանների համար, ձախ կողմը՝ ճառասոսների համար ամբիոն:

Դահլիճի առաջին մասում, բեմին կից, շինւած էին երկուական օթեակներ: Ձախ թեւի առաջին օթեակը յատկացւած էր կառավարութեան, երկրորդը՝ զօրահրամանատարութեան: Աջ կողմի առա-

ջին օթեակը կաթուղիկոսի համար էր, իսկ երկրորդը՝ օտար պետութեանց ներկայացուցիչներին:

Դահլիճի միջին մասը վերապահւած էր խորհրդի անդամներին: Յետեւի մասը եւ վերնայարկը՝ հասարակութեան:

Խորհրդի մուտքի երկու կողմը կախւած էին երկու դրօշներ՝ ազգային դրօշերով՝ կարմիր, կապույտ եւ նարնջագոյն:

Նշանակւած ժամանակին արդէն բոլոր տեղերը դրաււած էին: Դահլիճի մէջտեղը շարւած էին խորհրդի անդամները՝ հետեւեալ կարգով՝ հաշւելով աջից ձախ: Աջ կողմը Հայ ժողովրդական կուսակցութեան փրակցիա - Սո. Մալխասեան, Արշալոյս Մխիթարեան, Գր. Տէր-Խաչատրեան, Յովհ. Մելիքեան, Գարեգ. Ենգիբաբեան, Սիր. Տէր-Մարտիրոսեան:

Անկուսակցական - Սո. Մամիկոնեան, Պետ. Չաքարեան:

Մահմեդական պատգամաւորներ - Սէփդ-Ռիզա Միր-Բաբայեւ, Միրզա Զաբար Մամեդով, Աքբէր աղա Իսմայիլով, Միր-Բադիր Միր-Բաբայեւ, Մամէդ-բէգ Մահմէդբէգով, Ասադ բէգ Աղաբաբէգով:

Ռուս պատգամաւոր - Իվան Իվանովիչ Զորին:

Եզդիի պատգամաւոր - Իւսուֆ բէգ Թէյմուրով:

Կենտրոն. Հ. Յ. Դաշնակցութեան ֆրակցիա - Աւ. Սահակեան, Սիր. Տիգրանեան, Սմբ. Խաչատրեան, Սահ. Թորոսեան, բժ. Արտ. Բարայեան, Եփր. Սարգսեան, Ռ. Տէր-Մինասեան, բժ. Յովհ. Տէր-Միքայէլեան, բժ. Արշ. Ղազարեան, Դրօ, Յով. Բուդաղեան, Տիգ. Ռաշմաճեան, Թադ. Թօշեան, Յակ. Տէր-Յակոբեան, Հ. Սարգսեան, Արտ. Վանցեան, Արշալոյս Աստածատրեան:

Ձախ կողմը. Սոցիալիստ - յեղափոխական - բժ. Գր. Տէր-Յակոբեան, Դաւ. Զուբեան, Արշամ Խոնդկարեան, Գ. Տէր-Օհանեան, Տիգ. Մուշեղեան, Արմ. Աւետիքեան:

Սոցիալ - Դեմոկրատ - Արշաւիր Մելիքեան (բուլղերիկ), Հայկ Աղատեան, Թադ. Աւտարէկեան, Մ. Ղարաբէգեան, Ա. Մելիք-Աղա-Ջանեան, Յովհ. Չաքարեան:*)

*) Հայաստանի հոբիթի անդամների ցանկը կազմել էր Թիֆլիսի եւ Երեւանի Ազգային հոբիթիոյների միացեալ նիստում: Որոշել էր եռապատկել Հայոց Ազգային հոբիթի անդամների թիւը, ըստ կուսակցութիւնների եւ հրաւիրել ներկայացուցիչներ այլազգիներից: Կուսակցութիւնները իրաւունք ունէին փոխել իրենց պատգամաւորներին՝ հրաժարեցնել մէկին, նշանակել ուրիշին:

Պատգամաւորների այս ցանկը հետագային ենթարկեց զգալի փոփոխութիւնների: Հայաստանից մեկնած, հոբիթի կազմից հրաժարւած կամ յետ կանչւած պատգամաւորների տեղ նշանակուում էին նորերը: Մանաւանդ մեծ փոփոխութիւնների ենթարկեցին դաշնակցական եւ ժողովրդական հատւածները:

Կառավարական օթեակում նստած էին վարչապետ Յ. Քաջազ-
նունին իր դահլիճի միւս անդամների հետ միասին — ներքին գործոց
նախարար Արամ Մանուկեան, ղինւորական նախարար զօր. Յովհ.
Հախվերդեան, ելեւմտական նախարար Խաչատուր Կարմիրեան, ար-
դարադատութեան նախարար Գրիգոր Պետրոսեան: Դիւանագիտական
օթեակում նստած էին դերման, աւստրիական եւ օսմանեան ներկա-
յացուցիչները, պարսից հիւպատոսը, ռուս, թուրք եւ ուկրայնական
ազգային խորհուրդների ներկայացուցիչները: Զինւորական օթեա-
կում կային Հայաստանի Հանրապետութեան առաջին սպարապետ
զօր. Թովմաս Նազարբեգեանը, զօր. Սիւիկեանը, Դրօն եւ ուրիշ
ղինւորականներ: Պարապ էր միայն կաթողիկոսի օթեակը:

Մամուլի ներկայացուցիչներին յատկացւած էր առանձին տեղ:
Հասարակութեան համար վերապահւած տեղերը՝ դահլիճի յե-
տեւի մասը եւ վերնայարկը գրաււած էին հիւրերով եւ ունկնդիր
հասարակութեամբ: Պարապ տեղ չկար:

Ամբողջ սրահը կրում էր խորհրդաւոր բնոյթ. պատդամաւոր-
ներն ու հասարակութիւնը ամենքն լուռ էին ու մտահոգ:

Ժամը 11 եւ կէսին ամբիոն բարձրացաւ Հայոց Ազգային Խոր-
հուրդի նախագահ Աւետիք Սահակեանը եւ յանուն Ազգային Խոր-
հրդի բաց արաւ Հայաստանի Խորհրդի անդրանիկ նիստը հետեւեալ
ճառով. —

«Քաղաքացիներ, պատդամաւորներ Հայաստանի Խորհրդի:

Գերագոյն Հայոց Ազգային Խորհրդի կողմից ես պատիւ ունիմ
այսօր բաց անել անդրանիկ նիստը Հայաստանի Խորհրդի եւ յա-
տարարել, որ այսուհետեւ սա է միակ լիազօր մարմինը՝ ամփոփող
իր մէջ Հայաստանի Հանրապետութեան պետական իշխանութիւնը:

Այս օրը կը դառնայ մեզ համար պատմական եւ կը բանայ մի
նոր լուսաւոր դարաշրջան, մեր երիտասարդ պետութեան կեանքում,
ինքնուրոյն քաղաքական եւ տնտեսական զարգացման:

Այս օրը կը մնայ միշտ յիշատակելի եւ ա՛յն պատճառով, որ ա-
ռաջին անգամ իրականացած ենք տեսնում մեր նեղ հորիզոնի սահ-
մաններում գեղեցիկ երազներն ու նւիրական տենչը ինքնուրոյնման,
թէեւ անհնարին դժւարին պայմաններում:

Ենթադրելով, որ մեր երկրի անկախութեան հարցին չատերը
ձեզանից լաւատեղեակ չեն՝ ես յոյժ կարեւոր եմ գտնում այս բար-
ձրը ժողովին ներկայացնել այն փուլերը, որոնցով անցել է սկզբից
մինչեւ իր վերջին ձեւակերպումը անկախ պետութիւնների գաղափա-
րը Անդրկովկասում:

Մեր հանրապետութիւնը, ինչպէս եւ միւսները հանդէս եկաւ



Ա.Ն. ՍԱՀԱԿՅԱՆ

իրրեւ անկախ պետութիւն ա'յն օրից, երբ Անդրկովկասեան Սէյմը մայիս 26-ին իրեն յայտարարեց կազմալուծած. վրաց սոցիալ-դեմոկրատ Փրակցիայի նախաձեռնութեամբ եւ առաջարկութեամբ նոյն օրն իսկ Վրաստանը յայտարարեց իրեն անկախ:

Անդրկովկասի ամբողջութեան փլուզուց յետոյ մեր երկիրը թող-նըւած էր իր բախտին, ուստի Հայոց Ազգային Խորհուրդը շտապեց իր վրայ վերցնել կառավարութեան բոլոր Փոնկիցիաները:

Հէնց այդ ժամանակն էր, որ ստացեց օսմանեան կառավարութեան բոլորին յայտնի վերջնադիրը նոր հողային դրաւումների մասին եւ պահանջում էր պատասխան 48 ժամայ ընթացքում: Գերագոյն Խորհրդի կողմից անմիջապէս առանձին պատւիրակութիւն ուղարկեց Բաթում յանձինս Յ. Քաջազնունու, Մ. Պապաջանեանի եւ Ա. Խատիսեանի՝ տալով նրանց արտակարգ լիազօրութիւններ բանակցութիւններ վարելու տաճիկ պատւիրակութեան հետ:

Մեր պատւիրակութիւնը յաջողեցրեց որոշ ուղղումներ մտցնել սահմանների մէջ, բայց եւ այնպէս ստիպւած էր ընդունել վերջնադիրը եւ խաղաղութեան դաշինք կնքել Վէհլը փաշայի եւ Խալիլ բէյի հետ: Այստեղ առաջին անգամ Հայոց Ազգային Խորհրդի պատգամաւորները պաշտօնապէս ճանաչեցին իրրեւ ներկայացուցիչներ անկախ Հայաստանի եւ ստորագրեցին յունիս 4-ի դաշինքը:

Մեր պետութեան անկախութեան մասին յայտնի է նոյնպէս Տաճկաստանի դաշնակից պետութիւններին՝ Գերմանիային, Աւստրիային եւ Բուլղարիային: Պոլսում է մեր երկրորդ պատւիրակութիւնը, որի մէջ մտնում են Ա. Ահարոնեանը, Ա. Խատիսեանը եւ Մ. Պապաջանեանը, որոնք ուղևորւել են այնտեղ Օսմանեան Կառավարութեան հրաւերով, բանակցութիւններ վարելու Տաճկաստանի եւ նրա դաշնակից պետութիւնների հետ:

Այսպիսով, բազմակողմանի քննելով մի կողմից երկրի ուժերը եւ ա'յն հանգամանքները, որոնց մէջ գտնուում է հայ ժողովուրդը, եւ միւս կողմից՝ քաղաքական եւ տնտեսական ստեղծած դրութիւնը, Հայոց Ազգային Խորհուրդը սեղմեց իր սիրտը եւ անողոք դի-տակցութեամբ որոշեց վերջնականապէս ընդունել վերջնադիրը եւ ճանաչել Հայաստանի անկախութիւնը՝ իրեն յանձնելով պատմութեան անաչառ դատաստանին:

Այո՛, մեր հանրապետութիւնը փոքր է եւ նեղ իր սահմաններով. նա զրկւել է իր ամենադնահատելի երկրամասերից ու չի կարող իր մէջ տեղաւորել ամբողջ ազգաբնակչութիւնը եւ, կարծես թէ, պայ-մաններ չունի անկախ գոյութեան համար: Բայց ես կարծում եմ, մանկեր չունի անկախ գոյութեան համար: Բայց ես կարծում եմ, որ երկրի սահմանները քարացած չեն կարող մնալ միշտ. ես հաւա-

տում եմ, որ մեր երկրի սահմանները կընդարձակեն կեանքի երկաթէ ուժով, մեր արդար և անվիճելի իրաւունքների պաշտպանութեամբ դրաւած հողերի վերաբերմամբ և նոր բարեկամական դաշինքով Տաճկաստանի և նրա դաշնակից պետութիւնների հետ, որոնց ներկայացուցիչները ներկայ են այստեղ: Մենք ընտրել ենք համաձայնութեան և խաղաղութեան ուղին, և ուզում եմ յուսալ, որ չենք սխալւում:

Մինչ այդ, մենք կը կատարենք սրբութեամբ և անչեղ կերպով մեր այն պարտականութիւնները, որոնք բխում են խաղաղութեան դաշինքից: Թողնենք ապագայ հեռանկարները՝ յամենայն դէպս, այսօր այստեղ առանց տատանումների և լիակատար վճռականութեամբ մենք դիմում ենք խարխիւլ մեր պետական նաւի և զնում ենք հիմքը պետական շէնքի՝ ձգտելով միշտ կատարելագործել նրան ի բարօրութեան Հայաստանի Հանրապետութեան բոլոր ազգութիւնների, իբրեւ զաւակներ մէկ հարազատ մայր հայրենիքի. (բուն ծափահարութիւններ):

Յայտարարում եմ Հայաստանի Խորհրդի նիստը բացւած»:

Ա. Սահակեանի բացման ճառից յետոյ, Ժամը 12-ին, Ժողովըրդական «Կեցցէ»ների և «Մեր Հայրենիք»ի նաւով, Խորհրդի շէնքի դիւին բարձրացւեց հայկական եռագոյն դրօշը:

Ա. Սահակեանի ճառը թարգմանեց թուրքերէն և ուսերէն լեզուներով:

Ապա Ա. Սահակեանը կարգաց Հայաստանի Խորհրդի անգամներէ ցանկը, որից յետոյ առաջարկեց ընտրել Խորհրդի նախագահ: Հ. Յ. Դաշնակցութեան Փրակցիայի կողմից Սմբատ Խաչատրեանը առաջարկեց նախագահ ընտրել Ա. Սահակեանին: Միւս Փրակցիաները թեկնածու չներկայացրին: Բաց քէարկութեամբ Հայաստանի Խորհրդի նախագահ ընտրւեց Աւետիք Սահակեանը. ձեռնպահ մնացին 6 սոցիալ - դեմոկրատ պատգամաւորները:

Ծնորհակալութիւն յայտնելով Խորհրդին՝ նախագահը առաջարկեց ընտրել երկու փոխ - նախագահներ:

Արշալոյս Միսիթարեան Հայ Ժողովրդական Կուսակցութեան կողմից դրեց իրենց Փրակցիայի անդամ Գրիգոր Տէր-Խաչատրեանի թեկնածութիւնը: Սոցիալիստ - յեղափոխական Փրակցիան առաջարկեց ընտրել Դաւիթ Զուբեանին: Բաց քէարկութեամբ ընտրւեցին՝ Գր. Տէր-Խաչատրեանը 4 սոցիալ - դեմոկրատների ձեռնպահութեամբ և Դ. Զուբեանը՝ միաձայնութեամբ:

Հ. Յ. Դաշնակցութեան Փրակցիայի կողմից առաջարկեց ընտրել անկուսակցական Պետրոս Զաքարեանին աւագ քարտուղար. ընտրւեց միաձայնութեամբ:

Դիւանի կազմութիւնից յետոյ, նախագահ Աւ. Սահակեանը դիմեց Խորհրդին՝ որոշելու, թէ օրակարգը պէտք է սպառուած համարել, թէ շարունակել աշխատանքները։ Սմբ. Խաչատրեանը Հ.Յ. Դաշնակցութեան Փրակցիայի կողմից առաջարկեց սահմանափակել արդէն եղածով եւ մնացած խնդիրները յետաձգել յաջորդ նիստին։ Սոցիալ - դեմոկրատները կողմից առաջարկեց երկրորդ նիստը նշանակել հետեւեալ օրը. դաշնակցականները պնդեցին նշանակել շաբաթ օր։ Ժողովրդականների կողմից Գ. Տէր-Խաչատրեանն առաջարկեց յաջորդ նիստում լսել կառավարութեան զեկուցումը։ Վարչապետ Քաջագունիւն յայտնեց, թէ կառավարութիւնը չի ենթադրում վաղը յայտարարութիւն անել։ Քւէարկութեան դրւելով երկու առաջարկը՝ ձայների մեծամասնութեամբ որոշեց յաջորդ նիստը գումարել շաբաթ օր, օգոստ. 3-ին, ժամը 11-ին։

Նիստը յայտարարեց փակւած։

Հայաստանի Խորհրդի անդամնիկ նիստի փակումից յետոյ, Խորհրդի շէնքի առջեւ տեղի ունեցաւ զօրահանդէս, որ ընդունեց վարչապետ Քաջագունին։ Հանդէսը վարում էր երրորդ բրիգադի պետ գնդապետ Դանիէլ Բէկ Փիլոսմեանը։ Վարչապետը, Խորհրդի նախագահի հետ միասին, շրջապատւած Խորհրդի անդամներով, նախարարներով, գերման, աւստրիական եւ օսմանեան ղինւորական ներկայացուցիչներով, հայ բանակի ղինւորական պետերով ու հիւրերով աջից ձախ անցաւ զօրաճակատը՝ առանձին առանձին ողջունելով զօրամասերը ապա տեղի ունեցաւ զօրքի հանդիսաւոր տողանցք։ Հանդէսից յետոյ, զօրքը երաժշտութեամբ ու երգերով անցաւ քաղաքի ղլխաւոր փողոցներէից։

«Հորիզոն», 9 օգ. 1918.

ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ

3 օգոստոս, շաբաթ, ժամը 11.15

Նախագահ՝ Աւ. Սահակեան

Ներկայ են բոլոր պատգամաւորներն ու նախարարները։

Դիւանագիրտական օթեակում նստած են աւստրիական եւ գերմանական ներկայացուցիչները։

Օրակարգի հարցերն են. ա) կառավարութեան յայտագիրը. բ) պետական վերահսկողութեան (կոնտրոլ) խնդիրը. գ) մանդատային յանձնաժողովի ընտրութիւն. դ) Խորհրդի ներքին կանոնադրը (ռեգլամենտ) կազմող յանձնաժողովի ընտրութիւն։

Խօսք է տրուում կառավարութեան նախագահին յայտարարութեան համար։

Վարչապետ Յ. Բաղազնունի. — «Բացառիկ ծանր պայմանների մէջ գործի է անցել իմ կազմած կառավարութիւնը: Նա կոչւած է իրականացնելու գործադիր իշխանութիւն մի պետութեան մէջ, որ դեռ նոր է ծնունդ առել եւ տակաւին դուրս չէ եկել իր կազմակերպման առաջին շրջանից: Կառավարութիւնը չունի ոչ մի յենարան անցեալում. նա չի յաջորդում նախկին կառավարութեան՝ չարունակելու արդէն ընթացքի դրած պետական աշխատանքը. նա նոյն իսկ չի ժառանգում կենտրոնական իշխանութեան կարիքներին յարմարեցրած պատրաստի ապարատներ: Նա հարկադրւած է սկսելու ամէն բան սկզբից. անձեւ քաօսից եւ աւերակների կոյտից նա պէտք է ստեղծի կենսունակ եւ աշխատունակ մի մարմին:

Միւս կողմից, կառավարութիւնը գտնում է երկիրը այնպիսի վիճակի մէջ, որի բնորոշման համար մի բառ կայ միայն — կատաստրոֆային:

Չորս տարի տեւող պատերազմը, մեծ յեղափոխութիւնը, ռուսական զորքերի անկանոն նահանջը մեր սահմաններից, կայսրութեան տարրալուծումը, պատերազմական ճակատի վրա կրած մեր պարտութիւնը, տերիտորեաների կորուստը, Անդրկովկասի բաժանումը անշատ պետութիւնների — այս խորին ցնցումները չէին կարող չթողնել իրենց յետեւից ահռելի հետքեր: Տնտեսական կեանքի ու ֆինանսական դրութեան կատարեալ քայքայում, դադարում ապրանքների արդիւնաբերութեան եւ փոխանակութեան, կենսամթերքների ծայր աստիճան պակասութիւն, ամենաանհրաժեշտ առարկաների բացակայութիւն կամ սոսկալի թանգութիւն, ներմուծման բացարձակ ընդհատում, երկաթուղային հաղորդակցութեան դադարում, երթեւեկութեան ուրիշ միջոցների պակասութիւն, ապա հարկւր հազարներով հաչւող անտուն եւ անսնունդ գաղթականութիւն, անապահով կացութիւն սահմանների վրա եւ որպէս անխուսափելի հետեւանք այս բոլորի — անիշխանութիւն: Ահա թէ ինչպիսի ծանր պայմանների մէջ կանչւել է աշխատանքի իմ կառավարութիւնը:

Այս բացառիկ դրութիւնը նախորոշում է արդէն կառավարութեան բնոյթը: Նա չի կարող ձգտել բաղմակողմանի եւ լրիւ գործունէութեան, չի կարող ունենալ լայն ծրագիր եւ սահմանափակւելու է ամենաանհրաժեշտ ու միանգամայն անյետաձգելի խնդիրներով:

Կասեցնել քայքայման պրոցեսը, հանել երկիրը անիշխանական վիճակից ու ստեղծել պետական շինարարութեան համար անհրաժեշտ պայմաններ — ահա թէ ինչպէս է ըմբռնում իր կոչումը ներկայ կառավարութիւնը:

Համաձայն սրան, կառավարութիւնը դնելու է լուծման հետեւեալ խնդիրները.

Ա. Ներքին գործերի սահմաններում

1) Հաստատել երկրում տարրական իրաւակարգ կեանքի եւ գոյքի ապահովութիւն:

2) Բանալ հաղորդակցութեան ճանապարհները անարգել երթեւեկութեան համար:

3) Վերականգնել պոստ — հեռագրական նօրմալ հաղորդակցութիւն թէ երկրի մէջ եւ թէ հարեւան պետութիւնների հետ:

4) Եռանդուն միջոցների դիմել կարելոյն չափ մեղմացնելու պարենաւորման տալանապը:

5) Տնօրինել գաղթականների եւ փախստականների վիճակը՝ մասամբ վերադարձնելով իրենց նախկին տեղերը, մասամբ տեղաւորելով նոր վայրերում:

եւ 6) Նախապատրաստել Հայաստանի Սահմանադիր Ժողովի հաւաքում, կարելոյն չափ շուտ:

Բ. Ֆինանսների սահմաններում

Հող պատրաստել սեփական դրամական սխտեմի հիմքը դնելու համար: Զեռնարկել անհրաժեշտ միջոցներ, որպէսզի երկիրը ապահովւի դրամական նշաններով, վերականգնի արդիւնաբերական կեանքը եւ ավրանքների փոխանակութիւնը, ինչպէս նաեւ մշակւի հարկերի աւուղջ սխտեմ:

Գ. Արդարադատութեան սահմաններում

Յարմարեցնել դատարանը երկրի քաղաքացիական իրաւահասկուցման եւ իրաւական սովորոյթների պայմաններին, միաժամանակ մասնակից անելով քրէական դատավարութեանը ժողովրդի ներկայացուցիչներին:

Դ. Զինուորական գործերի սահմաններում

Վերակազմել երկրի զինուորական ուժերը, նպատակ ունենալով ստեղծել թույլ ոչ մեծ, բայց ոգով ու կարգապահութեամբ ուժեղ բանակ:

Ե. Արտաքին գործերի սահմաններում

1) Ամրացնել Օսմանեան Կայսրութեան հետ հաշտութիւնը եւ բարի դրացիական յարաբերութիւններ հաստատել նրա հետ: Խստիւ կատարել այն բոլոր պարտականութիւնները, որ մենք յանձն ենք ա-

ուել Օսմանեան Կայսրութեան հանդէպ եւ հետեւել, որ Օսմանեան կառավարութիւնը իր կողմից անի նոյնը մեր վերաբերմամբ:

Մասնաւորապէս լուծել Օսմանեան զօրքերի մեր երկրից դուրս բերելու հարցը եւ գաղթականների վերադարձը:

2) Ատրպատականի եւ Վրաստանի հետ փոխադարձ համաձայնութեան գալով՝ լուծել Հայաստանի եւ այդ պետութիւնների սահմանների հարցը, հիմք ունենալով էտնիկական սկզբունքը, իբրեւ միակը որ համապատասխանում է ռամկավար պետութիւնների ոգուն եւ նպատակներին:

3) Լիկւիդացիայի ենթարկել՝ համաձայնութեան գալով Ատրպատականի եւ Վրաստանի հետ՝ ընդհանուր հիմնարկութիւնները եւ գոյքը, որ մնացել են Անդրկովկասեան հանրապետութիւնից:

Այս է կառավարութեան ծրագիրը: Սա կարող է անւանւել պետութեան գոյութիւնը ապահովեցնող ամենամանհրաժեշտ դրաւականների ծրագիր: Պարզ է, որ նա չի ընդգրկում երկրի բազմազան կարիքները իրենց ամբողջութեամբ, որ նրա սահմաններից դուրս մնում են մի շարք շատ կարեւոր եւ արդէն հասունացած խնդիրներ: Բայց կառավարութիւնը չի դնում հերթի այդ խնդիրները, որովհետեւ նրանց լուծումը այսօրւայ պայմանների մէջ համարում է անկարելի: Կառավարութիւնը չի ուզում սխալանքների մէջ գցել երկիրը լայն հեռանկարներով եւ անիրադրժեշտ խոստումներով, չի ուզում վերցնել իր վրա պարտականութիւններ, որոնց կատարումը վեր է իր ուժերից: Կառավարութիւնը համոզւած է, որ առաջադրած ծրագիրը *maximally* է այսօրւայ հնարաւորութեան: Կառավարութիւնը լարելու է իր ամբողջ ուժն ու կարողութիւնը այդ *maximally* հասնելու եւ յոյս ունի յաջողութեամբ լուծելու գրւած խնդիրների գոնէ մի մասը, եթէ իր կողմն ունենայ խորհրդի անվերապահ մատահութիւնը եւ գործօն աջակցութիւնը»:-

Կառավարական յայտագիրը լսելուց յետոյ, խորհուրդը միաձայնութեամբ որոշում է նրա քննութիւնը յետագիւլ յաջորդ նիստին:

Ապա խորհուրդը ընտրում է մի յանձնաժողով նախարարութեան կազմակերպութեան օրինագիծ մշակելու համար:

Նախագահութեան տրամադրութեան տակ դրւում է 20,000 ռ. առհաչիւ մի գումար:

Հարցապնդում է արւում մշտական ղինւորական միութիւն կազմակերպելու առիթով. հարցի քննութիւնը որոշում է անել դռնիակ նիստում:

Հարցապնդում է արւում Չարբախ, Սարւանլար, Արբադ, Ալիզլար Գէոյքում գիւղերի բերքը մասնաւոր անհատների կապալով

տալու մասին: Այդ առթիւ մահմեդական պատգամաւորներէց մէկը աւելացնում է, թէ անհրաժեշտ է նաեւ պարզել թէ այդ չորս գիւղերի շրջանում գտնւած մզկիթապատկան հողերի վերաբերմամբ ի՞նչ կարգադրութիւն է եղած Հայոց Ազգային Խորհրդի կողմից:

Հարցումներ են արւում զաղթականութեան կացութեան եւ պարենաւորման գործի վիճակի եւ կառավարութեան ծրագրած գործունէութեան մասին: Այս առթիւ բացատրութիւններ է տալիս ներքին գործերի նախարար Արամը:

»Հորիզոն», 15 օգ., 1918 թ.

(Շարունակելի)

